

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵԴԵՄԻԱՅԻ Ն.ՇՆՈՐՀԱԼՈՒ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Նախագծող՝ «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ

Տնօրեն՝

Կ. Հովեյան

Ձեռնարկող՝ ԸԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ

Տնօրեն՝

Ա. Բաղդասարյան

Շրջակա միջավայրի

և սոցիալական մասնագետ

Ա. Կարապետյան

ԵՐԵՎԱՆ 2025

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 6

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԲՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ 7 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 16

 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները 18

 Բարեկարգում, կանաչապատում և ոռոգում..... 23

 Ջրամատակարարում և ջրահեռացում 23

 Ջեռուցում, օդափոխություն և էլեկտրամատակարարում 25

 Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ 28

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ..... 28

 Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր 28

 Առաջացող թափոններ 31

 Հիմնական մեքենա-սարքավորումներ ու շինարարական անձնակազմ..... 32

 Քանդման և հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ 33

 Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա..... 34

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... 40

 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները..... 41

 Տարածքի սեյսմիկ բնութագիրը 42

 Օդային ավազան..... 45

 Ջրային ռեսուրսներ 47

 Բուսական և կենդանական աշխարհ..... 50

 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում 52

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 53

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ..... 57

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ 59

ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ..... 59

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 62

 ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԻ ԵՏՂԱԴԻՐՔԸ WGS-84 ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 62

 ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 64

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	66
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ.....	67
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ.....	69
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ.....	70
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲՄԿՊ).....	71
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ.....	84
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ.....	85
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.....	86
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՑԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ	87
ՀԱՎԵԼՎԱԾ 13. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԻՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 14. ՎԵՐԵԼԱԿԻ՝ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՈՒՄ.....	91
ՀԱՎԵԼՎԱԾ 15. ԿԱԹՄԱՅԱՏԱՆ՝ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՈՒՄ	92
ՀԱՎԵԼՎԱԾ 16. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	93
ՀԱՎԵԼՎԱԾ 17. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ՝ ՋՈՒՐ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 18. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՂՑՈՒՂՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ	98

ՔԿ	Քաղաքաշինության կոմիտեն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիլական կառավարման պլան
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՀԿ	Հասարակաան կազմակերպություն
ՇՍ	Շահագործում և սպասարկում
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եղեսիայի Ն.Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Ձեռնարկող	«Ավանգարդ շին» ՍՊԸ և «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ ՀԳ
Ձեռնարկողի իրավաբանական հասցե	ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. 23/07
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	+374 (44) 20 10 02 baghdasaryan@inbox.ru
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ , Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցե
Կառուցապատման մակերես	2685,5քմ
Հողատարածքի մակերեսը	12 520 քմ
Դպրոցի նախագծային հզորությունը	288 աշակերտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցեում գտնվող դպրոցի կառուցումը իրականացվելու է ՀՀ կառավարության 300 դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագրի շրջանակներում:

Նախատեսվում է կառուցել 288 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոց տիպարային նախագծի հիման վրա տեղակայման միջոցով:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցեում գտնվող դպրոցի կառուցման նախագծային աշխատանքները կատարվել է «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի (2023 թվականի մայիսի 3) հոդված 12-ի, 4-րդ մասի, 8-րդ կետի 'ա' ենթակետի համաձայն, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցեում գտնվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող/հիմնանորոգվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500մ²-ը (դպրոցի կառուցվող շենքերի կառուցապատման մակերեսը կազմում է 2685,5 քմ): Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է <<Բ>> կատեգորիայի:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ, և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և Բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գնահատման հաշվետվության մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական

և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, բնապահպանական ուղեցույցների դրույթներին համապատասխան: Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները:

- Նախատեսվող դպրոցի աշխատանքային նախագիծը
- Նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը
- Գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրենսդրական կարգավորիչ շրջանակը:
- Շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

ՀՀ Սահմանադրություն (2015) 10-րդ հոդվածը սահմանում է որ ՀՀ ընդերքը, ջրային ռեսուրսները հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12-ը՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ:

ՀՀ օրենքներ

• «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023)՝ բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման "հայեցակարգերի" պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

• «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998) սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և

օգտագործման միջև: Նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարկերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ

պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

• «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Սույն օրենսգիրքը կարգավորում է Հայաստանում ջրային հարաբերությունները և Սևանա լճի կառավարման ու պահպանության հարցերը: Դրա հիմնական նպատակն է ազգային ջրային պաշարների պահպանությունը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը և էկոլոգիական կայունության ապահովումը: Ջրային օրենսգրքով սահմանվում է նաև Ջրային ռեսուրսների, ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման համակարգերի օգտագործման, վերականգնման և պահպանման տնտեսական կարգավորման հիմնական սկզբունքը՝ այն է՝ վճարովի ջրօգտագործումը (հոդված 76):

• «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

• ՀՀ կառավարություն որոշում 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասազերծման կամ պահպանման կամ փոխադրման եվ տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին >> (Վերնագիրը փոփ. 13.12.07 N 1451-Ն):

• «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

• «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) սահմանում է ջրի ազգային քաղաքականությունը ջրային ռեսուրսների կայուն

կառավարման, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների, ջրային ռեսուրսների հաշվառման գնահատման, առաջարկի և պահանջարկի ձևավորման և ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունների ուղղություններով:

- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)

- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) կարգավորում է ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006) սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները: Համաձայն օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

- ՀՀ Օրենքը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

- ՀՀ օրենքը «Մեյամիկ պաշտպանության մասին» (2002). սահմանում է ՀՀ սեյամիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:

• ՀՀ Օրենքը՝ Քաղաքաշինության մասին 1998) (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

ՀՀ կառավարության որոշումներ

• ՀՀ կառավարության 29.01.2010թ N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»

• ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»

• ՀՀ կառավարության 14.08.2008 թN 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»

• ՀՀ կառավարության 02 11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

• ՀՀ կառավարության 22,02,2018թ-ի թ. N 191-Ն որոշում «ՀՀ կառավարության որոշումը ընդերք օգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին»

• ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:

• ՀՀ կառավարության N1504-Ն որոշում (25.12.2014) «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»

• ՀՀ կառավարության N426-Ն որոշում (12.04.2018) «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»

- ՀՀ կառավարության որոշում 967-Ն ՀՀ (14.08.2008) «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:

- ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն (2003) «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին». սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Կառավարության որոշում N 108-Ն (2018) «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30- ի N1318-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին». սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության որոշում 596-Ն (19.03.2015) ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին». սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:

- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն (30.09.2015) «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին». սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28.12.2020) ՀՀԾՆ 20. 04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին հաստատում է ՀՀԾՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն (24.03.2016) «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»

- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017) «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»

- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N12-Ն (19.09.2012) «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային շենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ս ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ս (05.04.2018) «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (<https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf>):

- ՀՀ կառավարության որոշում 438 (20.04.2002) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը:

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25 09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ս, կառավարության` 10-

12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.mnp.am/> ինտերնետային էջում),

Միջազգային համաձայնագրեր

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին կոնվենցիա (Ստոկհոլմ): (2003թ վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Ուղեցույցներ և ստանդարտներ

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարակն նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրարկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀՇՆ 10-01-2014 ”Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով 8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի <<Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013), ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի-ի N 21-Ն հրամանը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ՀՀՇՆ 13-02-2022 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախատեսվող գործունեության տարածքը գնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցեում: Կառուցվող դպրոցն ապահովված է կադաստրային փաստաթղթերով, հողատարածքը սահմանազատված է: Հողամասի մակերեսը կազմում է 1, 252 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 02-080-0004-0070):

Կառուցվող դպրոցի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 2685,5քմ: Այն նախատեսված է 288 աշակերտների համար և բաղկացած է չորս մասնաշենքերից:

Կառուցվող դպրոցի տեղադիրքը համայնքում և իրավիճակային հատակագիծը ներկայացված է Հավելված 1-ում:

Ըստ ՀՀ ներկայումս գործող ՀՀՇՆ 20.04-2020թ-ի նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի Նոր Եղեխայի տարածքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $A_{max}=0.3g$ արագացումով:



Դպրոցի նախագծի համար որպես ելակետային տվյալներ են հանդիսանում.

- Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 04.10.2024 թ-ին տրված հ. 04102024-02-0070 վկայականը,
- Հաստատված տեխնիկական առաջադրանքը,
- «ՀԱՅԴ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊ ընկերության կողմից տրված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվություն
- Դպրոցի տարածքի տոպոգրաֆիական հանույթը,
- Տեղում կատարված չափագրական գծագրերը,
- «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ ընկերության կողմից մշակված նախագիծը,
- ՀՀ-ում գործող շինարարական նորմերը:

Նախագծային լուծումներն իրականացվել են հիմնվելով ՀՀ գործող նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»

- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»
- ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվար 12-ի թիվ 50-

Ն հրաման՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» 2.1.2.001-24 սանիտարական կանոններ եվ հիգիենիկ նորմատիվներ

- ՀՀ Քաղաքաշինության նախարարի 24 մարտի 2016թ. N49-Ն հրաման «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու» մասին

- ՇՈՒՍՊ 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»
- ՇՈՒՍՊ 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- ՇՈՒՍՊ 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- Սեյսմակայուն շինարարության նորմեր,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները

Նախագծվող դպրոցի տարածքի հեռավորությունը մոտակա բնակելի նշանակության հողամասերից մոտ 50 մ է, իսկ հասարակական նշանակության շենք շինություններից 200-250 մ: Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 12520 քմ: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի կառուցման ենթակա մակերեսը կկազմի 2685,5 քմ, կանաչապատ գոտիների աշխատանքների շրջանակը կներառի 6777,8 քմ տարածքը, նախատեսված են նաև բարեկարգման աշխատանքներ (Աղյուսակ 1):

Դպրոցային համալիրը տեղադրված է թեքություն ունեցող հողատարածքում: Դպրոցը նախագծված է չորս մասնաշենքով: Դպրոցային համալիրի ուսումնական բոլոր մասնաշենքերը իրարից բաժանված են սեյսմիկ կարաններով :

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայր, 2-րդ փողոց, 7 հասցեում գտնվող դպրոցը նախատեսվում է 1-12 դասարանների մինչև 288 աշակերտների համար: Դպրոցի գլխավոր հատակագիծը բերվում է Հավելված 3-ում:

Դպրոցային համալիրի առաջին մասնաշենքը /տարրական դպրոց/ հատակագծում ունի ուղղանկյան ձև և 27,6x20,0 մ առանցքային չափեր: Այն եռահարկ է, առանց նկուղային հարկի:

Այնտեղ տեղադրված են տարրական դասարանները, ներառական դասարան, և մարզասրահ, խաղասենյակ, շախմատի դասարան և այլն:

Երկրորդ մասնաշենքը /կենտրոնական/ իր մեջ պարունակում է առաջին հարկում մուտքային հարթակը թեքուղիներով, նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշասրահը, կենտրոնական աստիճանը, տնօրենի աշխատասենյակը, մեկ վերելակ:

Երկրորդ հարկում ուսմասվարների /միջին և տարրական դպրոցների/ աշխատասենյակները, և կաբինետներ:

Երրորդ հարկում տեղադրված են գրադարանը, նույնպես կաբինետներ և լինգաֆոնային կաբինետ:

Կիսանկուղային հարկում տեղադրված է ճաշարանի խոհանոցը իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը՝ միջին և ավագ դպրոցն է իր դասասենյակներով, կաբինետներով և սանհանգույցներով, որը հատակագծում ունի 29.4x 20.0մ չափեր: Մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում միայն երկհարկանի: Այստեղ են գտնվում Քիմիայի, Ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները:

Նկուղային հարկում են գնվում հրաձգարանը, սանհանգույցները և օժանդակ տարածքները:

Դպրոցային համալիրի չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ հատակագծում ունի ուղղանկյան ձև և 26,0x15,7 մ առանցքային չափեր: Այն մեկհարկանի է, մարզական գույքի սենյակով: Նկուղային հարկ չունի:

Դպրոցի հողամասի տարածքում նախատեսվում են օժանդակ շինություններ՝ կաթսայատուն և տրանսֆորմատորային ենթակայան :

Դպրոցի տարածքը կանաչապատվում է և տեղադրվում է մարզական խաղահարթակ:

Դասասենյակներ միջին մակերեսը կազմում է 62 քմ: Ըստ նախագծի՝ շինության ներքին սենքերը հարդարվում են գաջե սվաղով և ներկվում լատեքսային ներկով: Նկուղային հարկի, սանհանգույցների, խոհանոցային սենքերի և տեխնիկական այլ սենքերի պատերը ենթակա են Ց/Ա սվաղման՝ հետագա ներկումով կամ սալիկապատմամբ, ներքին սենքերում և առաստաղներում կիրառված գիպսեստվաթաթուղթը ջրակայուն է:

Դպրոցի միջանցքներում և սրահներում նախատեսվում են չսայթակող կերամոզրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային հատակներ: Դպրոցում նախատեսվում են այլումինե արտաքին դռներ, վիտրաժներ և պատուհաններ, իսկ ներքին դռները կլինեն ՄԴՖ տեսակի:

Բոլոր ճաղերը մետաղական են, ենթակա են երկտակ ներկման մետաղական

հակակոռոզիոն ներկով: Արտաքին պատուհանների և դռների պրոֆիլները նախատեսված են ալյումինե, ջերմային կամրջակով: Ներքին վիտրաժները ալյումինե շրջանակներով են՝ առանց ջերմային կամրջակի և թրծված ապակիներով: Երդիկների ապակիները 1 շերտը թրծված ապակուց են, ներքին շերտը տրիպլեքս՝ համալրված օդափոխության համակարգով՝ ջերմոցային էֆֆեկտը կանխելու նպատակով:

Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից:

Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Հետևաբար, դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար:

Տանիքը թեք է, լանջավոր՝ ալիքաձև փոշեներկված ցինկապատ թիթեղով, կազմակերպված ջրահեռացումով:

Շենքի տանիքն իրականացված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Դպրոցի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Դպրոցին տարածքում նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որը նախագծվել է 288 հոգանոց դպրոցի սպասարկման համար՝ մակերեսը կազմում է 39,44 և էլ. ենթակայան 31,32 քմ մակերեսով:

Ինչպես նաև դպրոցի էներգիայի արտադրության, լուսավորության և այլ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվում է արևային ֆոտովոլտային համակարգ:

Էլեկտրական փոխակերպիչների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 150կՎտ, ԱՖՎՎ-ների ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 155.4կՎտ: Արևային ֆոտովոլտային համակարգերը էլեկտրական ցանցին միացված է փոխհոսքերի հաշվառման սկզբունքով (net metering): Տեղադրվելու է երկկողմանի հաշվիչ (դարձվափոխիչային):

Նախատեսված է կառուցել 155.4 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայան, բաղկացած 4 սեղաններից, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է՝

- 1-ին սեղան - 94 հատ 555Վտ հզորությամբ վահանակ, ընդամենը 52.17 կՎտ,
- 2-րդ սեղան - 84 հատ 555Վտ կզորությամբ վահանակ, ընդամենը 46.62 կՎտ,
- 3-րդ սեղան - 42 հատ 555Վտ հզորությամբ վահանակ, ընդամենը 23.31 կՎտ,
- 4-րդ սեղան - 60 հատ 575Վտ հզորությամբ վահանակ, ընդամենը 33.3 կՎտ,

թվով 280 հատ արևային վահանակներից, յուրաքանչյուրը 555 Վտ (թույլատրելի շեղում +/- 5Վտ):

Կարող են օգտագործվել նաև ավելի բարձր տեխնիկական բնութագրերով (ՕԳԳ) ՖՎ վահանակներ: Կայանը կկառուցվի տանիքի վրա, որտեղ ԱՖՎԿ-ների զբաղեցրած մակերեսը կազմում է 723.63մ2, իսկ տարածքի մնացած մասը ծառայում է ենթակառուցվածքների սպասարկաման և ստվերների ազդեցությունից խուսափելու համար՝ կախված կայանի աշխարհագրական դիրքից: Կայանի համար ընտրված է 1 հատ 50 կՎտ, 1 հատ 40 կՎտ, 2 հատ 30 կՎտ հզորությամբ գծային ցանցային փոխակերպիչ: ՖՎ վահանակների խմբից մինչև MCB հաստատուն հոսանքի (ՀՀ) ավտոմատ անջատիչ լարանցումն իրականացված է 1x6 կտրվածքի հաստատուն հոսանքի (ՀՀ) կրկնակի մեկուսացմամբ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությանը նվազ ենթարկվող UL ստանդարտի մալուխով:

Շենքերի շուրջ իրականացվում է բազալտե սալվածք, տարածքը բարեկարգվում է, պարսպապատվում, իրականացվում է արտաքին լուսավորություն: Նախատեսված է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Տվյալ նախագծի կազմում կատարվել են նաև օդափոխության, ջեռուցման, ջրամատակարարման, հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, ֆոտովոլտային համակարգեր:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները նախագծվել են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշման դրույթների համաձայն:

Ներքին հարդարման՝ աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից:

Նախագծված դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր	Ցուցանիշներ	
Մասնաշենքերի թիվը	Հատ	4
Դպրոցի տարողունակություն	Տեղ	288
Հողատարածքի տարածք	քմ	12520

Կառուցապատման մակերես	քմ	2685,5
Մարզադաշտ	քմ	1132
Վազքուղի	քմ	376,6
Մարզահրապարակ	քմ	675,6
Սալվածք Արտաքին աստիճան թեքահարթակ	քմ	520
Հրապարակ, Անցուղիներ,	քմ	1830
Գազոն, Ծաղկանոց	քմ	1001
Կանաչապատ տարածք	քմ	1386,8
Լիցքային գրունտով լանշաֆտի կանաչապատում	քմ	2560
Տրիբունա	քմ	220
Սահմանագծով պարիսպ հենապատ	քմ	132,5
Հիմնական սենյակների ցուցանիշներ		
Ոսումնական սենյակների քանակ	հատ	12
Դասարաններ	հատ	12
Կաբինետներ	հատ	8
Տարրական Դասարաններ	հատ	4
Բժշկի սենյակ	հատ	1
Միջին Դասարաններ	հատ	5
Ավագ Դասարաններ	հատ	3
Ինժեներական ցանցեր		
Էլ. Սնուցում	կվտ	1200
Ջրամատակարարում	լ/վրկ	1,1
Կոյուղի	լ/վրկ	2,6
Ջեռուցում		
Կաթսաների քանակ /էլեկտրական/	հատ	3
Պահանջվող հզորություն	Կվտ-ժամ	1000
Կաթայատան մակերես	մ2	39,44
Էլ. ենթակայանի մակերես	մ2	31,32
Արևային ֆոտովոլտային համակարգ	կվտ	150

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՆՎԱՆՈՒՄ	Մակերես	Չ/Մ	%-ը ընդհանուրի մեջ
1	Դպրոցի մասնաշենքեր	անջրանցիկ	2685,5	ՔՄ 21,450
2	Մարզադաշտ	ջրաթափանց	1132	ՔՄ 9,042
3	Վազքուղի	անջրանցիկ	376,6	ՔՄ 3,008
4	Մարզահրապարակ	անջրանցիկ	675,6	ՔՄ 5,396
5	Սալվածք Արտաքին աստիճան թեքահարթակ	անջրանցիկ	520	ՔՄ 4,153
6	Հրապարակ, Անցուղիներ,	ջրաթափանց	1830	ՔՄ 14,617
7	Գազոն Ծաղկանոց	ջրաթափանց	1001	ՔՄ 7,995
8	Կանաչապատ տարածք	ջրաթափանց	1386,8	ՔՄ 11,077
9	Լիցքային գրունտով լանշաֆտի կանաչապատում	ջրաթափանց	2560	ՔՄ 20,447
10	Տրիբունա	անջրանցիկ	220	ՔՄ 1,757
11	Սահմանագծով պարիսպ հենապատ	անջրանցիկ	132,5	ՔՄ 1,058
	Ընդամենը մակերես ըստ՝ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ 12520		12520	100
	Ընդամենը՝ ԱՆՋՐԱՆՑԻԿ			% 36,8
	Ընդամենը՝ ՋՐԱԹԱՓԱՆՑ			% 63,2

Աղյուսակ 1. Նախատեսվող աշխատանքների վերաբերյալ ընդհանուր ցուցանիշներ

Բարեկարգում, կանաչապատում և ռոռգում

Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի:

Կանաչապատ գոտիների աշխատանքների շրջանակը կներառի 6777,8 քմ տարածք, մասնավորապես, և կբարեկարգվի և կստեղծվի կանաչ գոտի:

Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով բնակավայրերի՝ կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները և համաձայնեցվել է Աշտարակի համայնքապետարանի հետ (հավելված 6):

Նախատեսվող գործունեության տարածում գոյություն ունեցող ծառեր և թփեր չկան: Սույն նախագծով նախատեսվում է տեղանքի՝ բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող ծառերի (43 հատ) տնկում, մասնավորապես,

- Տույա-10
- Եղնի-8
- Այլ տեսակներ՝ 25 :

Կանաչապատ մակերեսում կիրականացվի նաև սիզամարգեր: Կանաչապատ գոտիների ռոռգումը կիրականացվի նոր ռոռգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի ընդհանուր ռոռգման համակարգին: Ոռոգումը կիրականացվի կաթիլային և անձրևացման եղանակներով:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Ջրամատակարարում և ջրահեռացում

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայրի դպրոցի կառուցման նախագծի Սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման եվ տանիքի

անձրեվաջրերի հեռացման ցանցերի նախագիծը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, ՇՆ-ՁԿ 40-01,01-2014, 40-01.02-2014, 40-01.03-2014 գործող շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև տեխնիկական պայմանի:

ՀԱՆՎԱՐԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ցանցի անվանումը	Պահանջվող ճնշումը	Հաշվարկային ելքեր		Հակ կարիք լվրկ
		խմեմ	ևկրկ	
Սառը ջուր	26	3.96	1.10	2,5
Կոյուղի			2.60	

Աղյուսակ 2. Ջրամատակարարման և ջրահեռացման համար հաշվարկային ցուցանիշներ

Սառը ջրի սնուցումը կատարվում է պոցի տարածքին մոտ 15 մ հեռավորության վրա անցնող համայնքային ջրմուղի DN 100մմ ցանցից Մ 50մմ խողովակով:

Ջրամատակարարման եվ հրդեհաշիջման ցանցերը նախատեսված են համակցված: Տաք ջրամատակարարումը նախատեսված է դպրոցի տարածքում նախատեսվող անհատական կաթսայատնից: -3,00 նիշում նախատեսվում է ջրի պաշարի բաք V=50 խմ չժանգոտվող պողպատից՝ բետոնե հենարանների վրա (այն նախատեսվում է պահել նաև հակահրդեհային կարիքների համար՝ 2,5 լ/վրկ, պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Հետագա հրդեհամարումը պետք է իրականացվի հրշեջ ծառայության միջոցով բակում նախատեսված արտաքին հորից՝ V=67,5խմ): Բաքի ներսում ջրի մոտեցման հատվածում նախատեսվել ջրի հորիզոնը ազդարարող սարք փ50: Բաքին կից -3,00 նիշում նախատեսվել է ինվենտորային 2 պոմպով համալիր q=2.94 մա/ժ, h=80 մ, n= 3.0 կվտ:

Ցանցի համար նախատեսված են պոլիպրոպիլենե խողովակներ մ32 Փ 15մմ եվ պողպատե մ50: Արտաքին ջրամատակարարման ցանցը ջրաչափական հորից մինջեվ կաթսայատուն նախատեսված է պոլիէթիլենե խողովակ Մ63x5.8:

Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում եվ հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Այնուհետեվ միացնելով տարածքում նախատեսվող կեղտաջրերի մաքրման կայանին ՏՈՊԱՍ-150: Ցանցերի համար նախատեսված են կոյուղու պլաստմասե խողովակներ՝ մ200 Փ 50 մմ: Ցանցի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու եվ հետագա շահագործման համար:

Ջեռուցում, օդափոխություն և էլեկտրամատակարարում

ՋԵՌՈՒՑՈՒՄ

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի իրականացումը (միացումները) կատարվում են անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից: Ջեռուցման, օդափոխության և էլեկտրամատակարարման նախագծերը իրականացվել են համաձայն ՀՀ-ում գործող նորմների և կանոնների:

Ջեռուցման աղբյուր են հանդիսանում 3 տուրբո կաթսաները: 2-ը 500 Կվտ-ժամ հզորությամբ ջեռուցման իսկ 1ը 80 Կվտ-ժամ հզորությամբ տա ջրամատակարարման համար: Նրանք տեղադրված են լինելու կաթսայատանը:

Որպես ջեռուցիչ սարք ընդունված են այլումինե բարձրորակ մարտկոցներ՝ 129կկալ/ժ, $N_{սեկ.}=0.150$ կվտ/ժ: Նախատեսված է ներքին մատակարարումով «երկխողովականի» փակուղային համակարգ: Դպրոցի համար հաշվարկային արտաքին՝ $T_{ս.}=-19^{\circ}C$: ջերմատարը ջուր է - $T_1 - T_2=800/ -600/C$: Բոլոր սարքերի արբերիչները Մ20դ3,4 են: Նախատեսված է սարքերի տեղադրում ըստ ջերմային հաշվարկի: Ջերմային սնուցումը նախատեսված է նախատեսվող կաթսայատանից:

Օդը համակարգից հեռացվում է ջեռուցման սարքի վրա ել կանգնակների վերջում տեղադրված օդային փականներով, ինչպես նաև մանվսկու փականներով: Ճյուղավորումների վրա տեղադրվում են պոլիպրոպիլենային փականներ ել եռաբաշխիկներ: Բոլոր սարքերի արբերիչների վրա տեղադրվում են ջերմակարգավորիչ փականներ: Մայրուղագծերը անցկացվում են $i=0,003$ թեքությամբ հատակի վրայով, իսկ դռների հետ հատվող մասերում- հատակի տակով, մեկուսացված: Հաշվի առնելով օբյեկտի բնույթը որպես ջեռուցիչ սարք նկուղում ընդունված են յուղային մարտկոցներ:

Մասնաշենքերի ընդհանուր ջերմային ծախսը կազմում է $Q=362564.0$ ԿԿ/ժ
 $N=421.590$ ԿՎՏ/ժ:

Օդափոխություն

Համաձայն գործող նորմերի ել կանոնների դպրոցում նախատեսված է օդի ներածման ել արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ: Հանդիսությունների դահլիճում արտասահմանյան ռեկուպերատորի կիրառմամբ: Վերոհիշյալ համակարգում արտածումն իրականացվում է արհեստական եղանակով, որի օդը մտնում է ռեկուպերատորային ագրեգատ, տաքացնում է ներածվող օդը խառնման միջոցով, այնուհետեվ դուրս է մղվում արտաքին միջավայր: Ներածման օդատաքացուցիչ սարքավորումները ջերմային տաքացմամբ են:

Բոլոր օդատարները տեղադրվում են առաստաղի տակ, կեղծ առաստաղի մեջ: Ձեղնահարկում տեղադրվող բոլոր օդատարները մեկուսացվում են հանքային բամբակով: Օդի ներածման եվ արտածման համար օգտագործված են 1.494.-10 կարգավորվող ճաղավանդակներ:

Օդի ներածման լավորակման կոնդիցիոներներ են նախատեսված համակարգիչների, սնօրենի տեղակալի եվ ուսուցիչների սենյակներում:

Քիմիայի, ֆիզիկայի եվ կենսաբանության դասարաններում նախատեսված են քարշիչ պահարաններ:

Սան հանգույցներից, դասարաններից օդի արտածումն իրականացվում է բնական եղանակով:

Օդի ներածման լավորակման համակարգերը հաշվարկված են.

- Հանդիս. դահլիճի համար՝ 20 խմ յուրաքանչյուր տեղի համար:
- Մարզադահլիճի համար նախատեսված է 80 խմ 1 մարզիկի համար:
- Ուսումնական կաբինետներում ըստ նորմերի տրվում է օդի ներածում 16 խմ յուրաքանչյուր աշակերտի համար:

Նկուղային եվ վերին հարկերում օդափոխությունը իրականացվում են գլանային ռեկուպերատորներով:

Էլեկտրամատակարարում

Նախագիծը մշակված է է գլխավոր ճարտարապետի առաջադրանքի, ինչպես նաև հարակից բաժիններից (ջեռուցում-օդափոխություն, ջրամատակարարում-կոյուղի) ստացված տվյալների հիման վրա: Նախագծի լուծումները համապատասխանում են ընթացիկ կարգավորող փաստաթղթերի պահանջներին - ПУЭ-հրատարակություն 6.7; СП-31-110-2003-Բնակելի և հասարակական շենքերում էլեկտրական կայանքների նախագծում և տեղադրում; СП52.13330.2011-Բնական և արհեստական լուսավորություն; ՀՀՇՆ 22-03-2017- Արհեստական և բնական լուսավորություն:

Դպրոցի հաշվարկային հզորությունը՝ 190կՎտ:

Մտող մալուխներն էլեկտրավահանայինից մինչև խմբային վահանակներ կատարված են ВВГнг-LS հրակայուն մալուխներով և անցկացվում մալուխատարներով և միջհարկային կանգնակներով: Մտող մալուխների, ինչպես նաև միջվահանակային կապերի տվյալները ամփոփված են մալուխային մատյանում:

Ներքին ցանցերը մոնտաժվում են նույնպես BBΓԻՐ-LS մալուխներով, անցկացված մալուխատարների միջով միջանցքների երկայնքով և թաքնված է սվաղի շերտի մեջ:

Անջատիչների և վարդակների մոնտաժման բարձրությունն է 1.8 մ դասասենյակներում և միջանցքներում և 0.9 մ մյուս սենյակներում:

Դասասենյակների խմբային գծերը նախատեսված են խառը եղանակով (մեկական գիծ դասասենյակների համար): Խողովակներով հատակի մեջ ցանցեր են նախատեսված համակարգիչայինում (220Վ), ֆիզիկայի և քիմիայի դասասենյակներում (42Վ):

1 հարկի պահակակետից կատարվում է 1-3 հարկերի լուսավորության և ընդհանուր օդափոխության կենտրոնացված ղեկավարումը: Մյուս տարածքների օդափոխության սարքավորումների ղեկավարումը կատարվում է տեղում:

Որպես լույսի հիմնական աղբյուր կիրառված է 595x595մմ ունիվերսալ լուսադիոդային լուսատուներ 30Վտ հզորության միջանցքներում և 40Վտ դասասենյակներում: 30Վտ գծային LED լուսատուներ օգտագործված են նկուղային հարկում, խոհանոցում, հանդիսությունների և մարզադալիճներում (պաշտպանիչ ցանցով տարբերակ):

Տանիքի ջրահեռացման համակարգի տերրերի (ջրհորդաններ, ուղղաձիգ ջրխողովակներ) տաքացման համար 3 հարկի 2 թների P3 և P6 խմբային վահանակներում տեղադրվում են համապատասխան նոմինալների թողարկիչներ՝ ջերմակարգավորիչների միջոցով ավտոմատ ղեկավարումով: Թողարկիչներից դեպի տանիք անցկացվում են 5-ջիղային եռաֆազ մալուխներ, որոնցից մագիստրալ սխեմայով ճյուղավորիչ տուփերի միջոցով միացվում են բոլոր տաքացնող մալուխները:

Տարածքի արտաքին լուսավորության համար էլեկտրավահանայինում տեղադրվում է ժամանակի և ֆոտոռեկեներով կոմպլեկտավորված վահանակ (POL): Վահանակից դեպի տարածք անցկացվում են 2 եռաֆազ մալուխագիծ, որոնցից մագիստրալ եղանակով միացված են ճարտարապետի առաջադրանքով տեղադրված սյուները: Բացի ավտոմատ ղեկավարմանը, նախատեսված է պահակակետից ձեռքով միացումը:

Որպես էլեկտրական անվտանգության պաշտպանիչ միջոց՝ կիրարկված է TN-C-S համակարգը:

Համաձայն PՃ 34.21.122-87 (աղյուս.1.կետ 14) և CO153- 34.21.122-2003 (կետ 3.2.1.2) դպրոցի շենքը չի պատկանում շանթապաշտպանության հատուկ միջոցներ պահանջող կառույցներին:

Տանիքում տեղադրվող ֆոտոռեկենտրոնային պանելների կայծաքի ուղիղ հարվածից պաշտպանումը՝ վերջինների հենարանային կոնստրուկցիաների հողանցումով դիտարկված է նախագծի համապատասխան բաժնում:

Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Նոր դպրոցի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես. բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով, արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում, ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пенopleкс/ կիրառում, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Նոր դպրոցի մասնաշենքերի կառուցման աշխատանքներ,
- տարածքի վերականգնում, բարեկարգում և կանաչապատման աշխատանքներ:

Համաձայն մշակված շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի՝ նախաշինարարական աշխատանքների փուլում կիրականցվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Շինարարական հրապարակի կազմակերպման պլանը բերվում է Հավելված 4-ում: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում և կազմակերպման պլանում հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես՝

- տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում,
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները,

• ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքերը (սանհանգույց, ճաշարան, պահակակետ և այն՝ հավելված 4),

• շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը, անիվների լվացման հարթակը (որի տեղադիրքը հիմնավորվել է ելնելով աշխատանքների կազմակերպման և տարածքի աղտոտման նվազեցման տեսանկյունից)

• շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվում է 3 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանակացույցը բերվում է Հավելված 11-ում:

Իսկ Շին. թույլտվությունը թյունը ձեռք կբերվի ըստ կարգի:

Շինաշխատանքների իրականացումը կիրականացվում է մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները, մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

Շինարարական աշխատանքների ընթացքում՝ ըստ աշխատանքային նախագծի, գնահատվում են ստորև ներկայացվող ծավալները

- Հանույթ -13 240 խմ, (որից 8 450 խմ տեխնոզիական տեսանկյունից պիտանի չէ հետլիցքի համար, իսկ 4 790 խմ կօգտագործվի հետլիցքի համար)
- Հետլիցք-12 490 խ.մ, (4 790 խմ հանույթից և լրացուցիչ կբերվի 7 700 խմ)
- Լրացուցիչ բերվող գրունտ 7 700 խմ

13 240 խմ ծավալով հանույթը (փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (3140110008995)) ժամանակավոր կկուտակվի հրապարակում նախապես հատկացրված տեղերում: Հետլիցքի համար նախատեսվող հողային զանգվածը կպահպանվի 3 մ-ը և 34° անկյունը չգերազանցող կույտերի տեսքով և շինարարական պաստառներով ծածկված վիճակում:

Հողային աշխատանքների ընթացքում լրացուցիչ հանույթը կմատակարարվի՝ լիցենզավորված մատակարարներից պահպանելով ՀՀ-ում գործող օրենքները:

Համաձայն ՇՄՆ <<Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ, հունվարի 25-ի N 01-Ն հրամանի (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=146741>): ՀՕՄԿ ՊՈԱԿ-ի տվյալների համաձայն, 2023թ.-ի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ Արագածոտնի մարզում չեն իրականացվել: Չնայած դրան նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է սահմանափակ տարածքում, որտեղ կիրառվելու են բացասական ազդեցություններ մեղմացնող անհրաժեշտ միջոցառումները:

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է շուրջ 3 ամիս:

Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Դպրոցի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից:

Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի առկա օդային մալուխային գծից:

Առաջացող թափոններ

Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի <https://www.arlis.am/documentview.aspx?docid=28220>) և իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (3140110008995) ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ ծածկագիր 9120040001004:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Շինարարական թափոնների հեռացումն տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նոր Եղեսիա բնակավայրից 3 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայրում:

Շինարարական տեխնիկայի վառելիքով լիցքավորումը և յուղումը նախատեսվում է իրականացնել շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում, իսկ դրանց տեխնիկական սպասարկումը՝ համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Հետևաբար նախատեսվող գործունեության արդյունքում յուղերի, քսայուղերի, նավթամթերքների և դրանց մնացորդների տեսքով վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Հիմնական մեքենա-սարքավորումներ ու շինարարական անձնակազմ

Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստներից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՁԻՖ-55 մակնիշի):

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների միջին թիվը հաշվարկվել է 25 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմ և այլ աշխատողներ 8 մարդ, բանվորներ՝ 17 մարդ:

Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը ներկայացված է Աղ.2-ում ստորև.

N	Անվանում	Մակնիշ	Քանակը
	Էքսկավատոր	CAT 434-07	1
	Բուլդոզեր	CAT	1
	Ավտոկոունկ /մանիպուլյատոր/	SHAANXI	1
	Շարժական կոմպակտոր	TOTAL	1
	Տոփանիչ /բենզոտոփանիչ/	TOTAL	1
	Հետահարմուրճ	CAT	1
	Գույքային կադապարամած /մետաղական/	BAUMAK SOTO	1000քմ
	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	TOTAL	1
	Թրթրիչ խորքային էլեկտրական	TOTAL	1
	Եռակցման տրանսֆորմատոր	TOTAL	2
	Դակիչ ձեռքի էլեկտրական	TOTAL	1
	Ձեռքի էլեկտրական դուր	TOTAL	1
	Հղկող մեքենա/բենզինային/	TOTAL	1
	Ավտոբետոնախառնիչ	KAMAZ	1
	Ավտոբետոնապոմպ	KAMAZ	1
	Ավտոբեռնատար	SHAANXI	1

Աղյուսակ 3. Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը

Շինարարական աղբը, որի ծավալը կանխատեսվում է՝ 8 450 խմ (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի <https://www.arlis.am/documentview.aspx?docid=28220>) և իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004),

ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ ծածկագիր 9120040001004) շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով՝ Նոր Եղեսիա բնակավայրից 3 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայրում (տեղեկանքը բերված է հավելված 5-ում):

Քանդման և հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Որպես կանոն, բնակավայրերում իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը: Շինարարական հոսքաջրերի հեռացման վայրը, ձևը, եղանակը կորոշվի կապալառուի կողմից՝ շինարարության արտադրության նախագծի սահմաններում.

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 2680 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

Si - ջրվող տարածքի մակերես 2500 մ²

ki - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 90 օր

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի,

$$U1=2680 \times 2 \times 0.0015 \times 90 = 723,6 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 8 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0,016 մ³ օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ 900 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսություններ) թվաքանակ, 17 մարդ

V1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³ օր/մարդ

$$W_{\text{խ. տ.}} = (8 \times 0.016 + 17 \times 0.025) \times 900 = 497,7 \text{ մ}^3$$

Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ 723,6 մ³ + 497,7 մ³ = 1221,3 մ³

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինհրապարակի տարածքը սահմանափակ է, իսկ շինարարությունում ներգրավված բանվորների հիմնական մասը տեղաբնակներ են, ցնցուղարանի տեղակայումը համարվում է անհրատեսական:

Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է հետևել ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներին:

1. Էլեկտրաեռակցման աշխատանքների և բետոնային շաղափի (միայն դիտահորերի համար) խտացման ժամանակ անհրաժեշտ է եռակցվող ամրանները և թրթռիչը հողակցել:
2. Մոնտաժային շինվածքների եռակցման ժամանակ եռակցողները պետք է ունենան անհատական պաշտպանության միջոցներ:
3. Շինարարական աշխատանքներից առաջ, ամեն օր ստուգել մեքենա-մեխանիզմների, սարքավորումների, ժամանակավոր առկա պատնեշների և այլ շին. գործիքների սարքինությունը ու կայունությունը:
4. Չի թույլատրվում Օգտագործել արկոհոլ աշխատանքային վայրում և աշխատանքի ժամանակ: Ծխել թույլատրվում է միայն հատուկ տրամադրված վայրերում,
5. Գտնվել մեքենա-մեխանիզմների տեղաշարժվող տարածքի շարժման գոտում:

<i>Խախտման հնարավոր հետևանքները</i>	<i>Խախտման պատճառը</i>	<i>Խախտման նախազգուշական միջոցառումները</i>
Դարասկի քանդվում ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3°-ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիրների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում. ճոպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կարճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարասկին, ճոպանի	Նախազգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և ասեստացիա

լարում		
<p>Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում</p>	<p>Ամբարձիչի աշխատանքի ժամի անհամապատասխանություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում քան տրված է անձնագրում): Չնախատեսված աշխատանքային շարժումների համատեղում</p>	<p>Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ աումնասիրություն</p>
<p>Էլեկտրական տրավմաներ</p>	<p>Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվու թյան (наряд-допуск), ԷԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում</p>	<p>ԷԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում</p>
<p>Տեղափոխվող կոնստրուկցիայից առասանման սարքից վնասվածքներ</p>	<p>Չայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում</p> <p>Որակագրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում</p>	<p>Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անարբության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա</p> <p>Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում</p>
<p>Ամբարձիչով</p>	<p>Աշխատանքների</p>	<p>Աշխատանքների</p>

<p>վրաերթ քանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով քանվորների վնասում</p>	<p>կազմակերպ- ման նախագծով (ԱԿՆ) հաստատված տեղաշարժման ուղեգծի շեղում, նյութերի և վերացում կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբարձիչ մեխանիզմների ուղեգծի վրա Ամբարձիչի և կառույցին միջև թույլատրելի հեռավորության գերազանցում</p>	<p>իրականացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության ոչ պակաս քան 1 մ պահպանում:</p>
<p>Բանվորի ժամանակից շուտ հոգնածություն, գլխապտույտ և փսխում</p>	<p>Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, զազերի առկայությունը աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում</p>	<p>Աղմուկի վիբրացիայի, զազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում</p>
<p>Մրսածության հիվանդություններ և ցրտահարում</p>	<p>Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք</p>	<p>Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում</p>

Աղյուսակ 4. Անվտանգության նախագծուղական միջոցառումները ե/բ կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ զծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ, ծայրամասային էլ. հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգազիր - թույլտվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին և կախվում ամբարձիչի մոտակայքում տեսանելի վայրում:

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում նվազագույն հեռավորությունը 1մ է:

Ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 0.5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է ճանապարհին հանդիպող առակներից բարձր լինեն 0.5մ: Թույլ չի տրվում տեղափոխվող էլեմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի սվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում: Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առասանման եղանակները պետք է բացառեն վերնաշխատանքները (верхолазные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլտվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման գոտին լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի խցիկից /կաբինայից/, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը եթե հայտնաբերվում են ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական

ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԿ III-4-8* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Ջրամատակարարման և ջրահեռացան շինարարական աշխատանքները սկսել տարածքում ժամանակավոր արգելապատնեշների (խողովակներ) տեղադրումից և ժապավենների անցկացումից հետո: Ջրամատակարարման և ջրահեռացան ցանցը կառուցվում է հողային ծածկույթով ճանապարհների երկայնքով: Բոլոր շինարարական աշխատանքները կատարվում են ձեռքի կտրող հատող ժամանակակից գործիքներով, ինչպես նաև շինարարական մեքենա-մեխանիզմներով, այդ թվում շինանյութ ներկրող թեթև բեռնատար մեքենաներով:

Շինհրապարակից դուրս տարածքում պահպանել պատշաճ մաքրություն: Շինարարական նյութերի պահեստավորումը ելնել շին. հրապարակի առկա վիճակից (փողոցի լայնությունից և շահագործելիությունից): Անրաժեշտ շինարարական բոլոր նյութերը բերվում են շին. հրապարակ և հենց բեռնատարից բեռնաթափվում արդեն պատրաստված խրամուղու երկայնքով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքային անընդհատությունը (նվազագույնը 3 օրվա տևողությամբ):

Առանձին խողովակները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը, նաև հանդերձանքներն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են շինարարական հրապարակ որտեղ կատարվում է դրանց պահեստավորումը և տեղադրումը:

Շին. հրապարակում նախատեսվում է ժամանակավոր էլեկտրամատակարարում: Խրամուղու երկայնքով տեղադրել գիշերային լամպեր և այլ ազդարարող սարքեր:

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համաձայն իրավասու մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտը.

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:
2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:

3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո

4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:

5. Ավազի ներկրումը կատարել բեռնատարի վրա պաստառի առկայությամբ,

6. Ավազի բեռնաթափումից հետո այն անմիջապես թրջել ջրի շիթով փոշու առկայությունը բացառելու համար,

7. Ավազի շերտերի փռումը և բնահողի հետլիցքն իրականացնել մեխանիզմների միջոցով, նախապես թրջելով դրանք,

8. Հատվող փողոցներում նախապես տեղադրել խողովակապատյաններ և անմիջապես կատարել հետլիցք և խտացնել

9. Խրամուղու անցկացման այն հատվածամասերում, որտեղ հատվում են ուղղահայաց փողոցների հետ տվյալ հատվածում անցորդների համար կառուցել ժամանակավոր կամրջակներ:

10. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:

11. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների սանիտարական պայմանների ապահովում:

12. Շինարարության մեջ աշխատողների բանվորների հիմնական քանակի ներգրավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի (եթե այդպիսիք կան) տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահովված կլինեն ջրով և կոյուղով:

13. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:

14. Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնման աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ՝ էսթետիկ տեսքը:

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Կառուցման ենթակա դպրոցը գտնվում է գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 25 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1070 մ:

Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի տարածքի կենտրոնական մասում և սահմանակից է Շիրակի, Լոռու, Կոտայքի և Արմավիրի մարզերին: Մարզը ընդգրկում է Արագածի հյուսիս-արևելյան, արևելյան և հարավային լանջերը՝ սկսած նրա գագաթից մինչև 1000մ բարձրությունները:

Միջին տարեկան ջերմաստիճանը մարզի նախալեռնային շրջաններում (մինչև 1500մ) 8-11°C է, լեռնային շրջաններում (մինչև 2000 մետր)՝ 4-6°C է, 2700մ-ից բարձր այն 0°C -ից ցածր է, 3229մ բարձրության վրա (Արագած բ/լ) միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է -2.6°C: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է, միջին ամսական ջերմաստիճանը Արագածի զանգվածի հարավային լանջերի նախալեռնային շրջաններում -4...-6°C է, լեռնային շրջաններում՝ -7...-9°C, բարձր լեռնային շրջաններում՝ -10°C-ից ցածր: Հուլիս-օգոստոս ամիսներին միջին ջերմաստիճանը նախալեռնային շրջաններում կազմում է 22-25°C, լեռնային շրջաններում՝ 18-20°C, իսկ բարձր լեռնային շրջաններում՝ 9-15°C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանները մարզի տարածքում տատանվում են 20°C-ից (Արագած բ/լ) մինչև 41°C (Աշտարակ), իսկ նվազագույն ջերմաստիճանները -22°C-ից (Աշտարակ) հասնում են մինչև -34°C (Արագած բ/լ):

Հարաբերական խոնավությունը տարվա ընթացքում մեծ է միջին և բարձր լեռնային շրջաններում և գիշերվա ժամերին հասնում է 80-90%: Ամռանը ցածրադիր գոտում, հատկապես ցերեկվա ժամերին, հարաբերական խոնավությունը փոքր է՝ 40-50%, իսկ շատ հաճախ՝ 30%-ից ցածր:

Տեղումների քանակը Արագածոտնի մարզում տատանվում է 350մմ-ից (Աշտարակ) մինչև 1000մմ (Արագած բ/լ): Ամռանն ամենուրեք տեղումները դիտվում են անձրևի տեսքով: Ամառը հաճախ ուղեկցվում են կարկտահարությամբ: Տարվա ընթացքում կարկուտով օրերի թիվը մարզում տատանվում է 2-ից (Աշտարակ) 9 օր (Արագած բ/լ): Տարվա ընթացքում մարզում 60-160 օր դիտվում է մառախուղ: Տարվա ընթացքում բուք Թալինում դիտվում է 6 օր, Ապարանում՝ 17 օր և Արագած բ/լ կայանի տարածքում՝ 80 օր:

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22. 01. 24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Ուսումնասիրվող տարածքը կազմված է մի շարք միջին չորրորդական լավային հոսքերով: Դրանցից մեկը տարածված է նաև տարածքի մատույցներում: Լավային հոսքերի վրա

են տարածված տուֆային նստվածքները: Տուֆերի տարածվածությամբ պայմանավորված սարահարթի հողաբուսական շերտը ունի կիսաանապատային բնութագիր, բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են: Այս ապարները հիմնականում ծածկված են էյուվիալ-դեյուվիալ և պրոյուվիալ ծագման նստվածքներով:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, արխիվային նյութերի, գրունտների լաբորատոր հետազոտությունների տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտները՝ վերնից–ներքև:

Շերտ 1

Ավազակավեր շագանակագույն, մանրախճի և խճավագազի պարունակությամբ 10-15%, պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33գ) III կարգ է:

Շերտ 2

Տուֆեր դեղնավուն, գորշ սև, վարդագույնից մինչև կարմիր երանգի, պինդ, հոծ: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (37) V կարգ է:

Շերտ 3

Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ ավազակավի կավավազի լցոնով, մանրաբեկորների պարունակությամբ: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (13) IV կարգ:

Շերտ 4

Բազալտներ բեկորային անջատումներով, պինդ, ծակոտկեն, մանրահատիկ խճաքարային նստվածքներ 25-30% պարունակությամբ, խճավագային լցոնով: Չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (19) VII կարգ է:

Էկզոգեն երկրաբանական վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափությունը և այլն, կառուցապատման տարածքում բացակայում են:

Գործունեությունը իրականացման տարածքում համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների, տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Համաձայն ՈՀՀՇՆ 20.04. 20թ. -ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀ շինարարական նորմերում ներառված <<ՀՀ համայնքներն ու

բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների>> հաստատված ցանկի արժեքների նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում՝ գրունտների $A_{max}=0.3g$ արագացմամբ, 7 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

Կլիմա

Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22. 01. 24 «Շինարարական կլիմայաբանություն» փաստաթուղթը: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը, ցուրտ անհողմային ձմեռը: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝ ըստ «Աշտարակ» օթերևութաբանական կայանի տվյալների, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում.

- Տարեկան միջին ջերմաստիճանը 11. 9°C:
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 41,2°C:
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -24,5°C:
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 62%:
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 79%:
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 54%:
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 377 մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 2. 1մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70սմ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22. 01. 24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Չյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է: (<http://armmonitoring.am>)

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Բնակավայրի անվանումը	Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
2. Աշտարակ	0.6	1.2	2.8	2.7	3.9	4.8	5.6	5.2	2.8	1.5	1.0	0.5	33

Աղյուսակ 5. Ուժեղ քամիներով օրերի քանակը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը մ/վ	Ուժեղ քամիների (≥15մ/վ) քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
Աշտարակ	891.5	2.1	33	29	31	34

Աղյուսակ 6. Քամու պարամետրերը

Ստորև աղյուսակի տեսքով բերվում են կլիմայական մի քանի տվյալներ՝ ըստ Աշտարակի օդերևութաբանական կայանի դիտարկումների (ՀՀՇՆ 22-01-2024, (https://www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf) նորացված նորմատիվային փաստաթուղթ):

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
2. Աշտարակ	-3.2	-0.1	5.8	11.7	16.5	21.5	25.2	25.2	20.5	13.6	6.2	-0.2	11.9	-24.5	41.2

Աղյուսակ 7. Օդի միջին ջերմաստիճանը՝ ըստ ամիսների

Բնակավայրի անվանումը	մ. ա / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընկ ընկ
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
2. Աշտարակ	մ. ա.	1.2	4.8	11.2	17.6	23.1	28.8	32.5	32.6	27.8	20.1	11.7	4.0	17.9
	մ. ն.	-6.6	-3.9	1.3	6.5	10.7	15.2	18.8	18.7	14.2	8.3	2.0	-3.4	6.8

Աղյուսակ 8. Օդի միջին առավելագույն (մ ա) և միջին նվազագույն (մ ն) Ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
2. Աշտարակ	ա	12.8	17.5	24.4	32.5	32.2	39.0	41.0	41.2	38.0	31.0	24.0	19.5	41.2
	ն	-24.5	-21.8	-15.0	-9.0	0.9	4.8	6.8	9.5	3.0	-4.0	-12.3	-21.5	-24.5

Աղյուսակ 9. Օդի դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
2. Աշտարակ	79	71	64	64	64	57	54	54	57	66	72	80	65	79	72	54	44

Աղյուսակ 10. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ _____ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
2. Աշտարակ	27	30	36	55	59	33	20	11	13	34	29	30	377	152	225
	24	24	28	39	45	30	45	22	32	43	40	22	45		

Աղյուսակ 11. Մթնոլորտային տեղումներ

Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շաբժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի

գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

2024 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում:

Ուսումնասիրվող տարածքում «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներների համար նախատեսված հիմնական անշարժ և շարժական կայաններ տեղադրված չեն, և Աշտարակ քաղաքի օդային ավազանի օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալներ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, հետևաբար եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային աղտոտվածության վերաբերյալ բացակայում է և այդ տարածքում բացակայում են զգալի յուրահատուկ արդյունաբերական աղտոտման աղբյուրներ, ապա հիմք ընդունելով, որ Աշտարակ համայնքում բնակչության թվաքանակը կազմում է 16 630 մարդ, և ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Աշտարակ համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշի՝ 0,095 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,033 մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 1,1 մգ/մ³:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Աղյուսակ 12. Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (<http://meteomonitoring.am/page/1591>)

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ ՇՄՆ կողմից:

Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է < Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն > կողմից: ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65705>) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ կենցաղային կեղտաջրերը: 2022 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, 5%-ում՝ 4-րդ դաս և 55%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13ում՝ նաև որակի մոնիթորինգ (<http://armmonitoring.am/publications/cat/16?type=monthly>)

Հիդրոլոգիական դիտարկումներ- Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Յոթ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ ³ /վ		
		փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	6.30	7.77	81.1
Հրազդան	Արգել	2.86	4.21	67.9
Հրազդան	Երևան	5.96	6.81	87.5
Մարմարիկ	Հանքավան	1.47	1.68	87.5
Մարմարիկ	Աղավնաձոր	4.85	4.79	101
Քասախ	Վարդենիս	0.58	1.21	47.9
Քասախ	Աշտարակ	3.67	3.43	107

Աղյուսակ 13. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը

Մակերևութային ջրերի որակ - Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև, ինչպես նաև գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ նաև ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով և ընդհանուր անօրգանական ազոտով: Ապարան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով: Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով: Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով: Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս),

գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով: Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր -Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, որոնցից 13 դիտակետում իրականացվել է նաև ջրի որակի մոնիթորինգ: Գյ. Սուլակի N1297, N1832 և գյ. Բջնիի N246 դիտակետերում 2022թ. ծախսի բարձր արժեքները նկատվել են մայիս-հունիս, իսկ ցածրը՝ հունվար, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին և տատանվում են 1.75-7.65 լ/վ սահմաններում: Ապարան քաղաքի N2051 բնաղբյուրում ծախսերը 2022 թ. տատանվել են 4.23-6.77 լ/վ սահմաններում: Ջրերի ծախսի և մակարդակի փոփոխությունները զգալի են Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան գոգավորության տարածքում գտնվող N78, N1523, N1519, N1526 դիտակետերում: Հրազդանի ՋԿՏ-ի 13 դիտակետում 2022 թվականի մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: Այս ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացման տատանումները կազմել են 0.1-1.3 գ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիաների տատանումները՝ 5. 8-517. 2 մգ/լ: Հանքայնացման գերազանցումներ դիտվել են ք. Մասիսի N1519, գյ. Ջրահովիտի N2007 և գյ. Հովտաշենի N2053 հորատանցքերում, սուլֆատ իոնի կոնցենտրացիաները գերազանցումներ դիտվել են գյ. Ջրահովիտի N2007 հորատանցքում: Քլորիդ իոնի կոնցենտրացիաների տատանումները կազմել են 2. 4-196. 4 մգ/լ, նիտրատ իոնի տատանումները՝ 2. 7-44. 1 մգ/լ, պղնձի, կապարի և արսենի կոնցենտրացիաների տատանումները համապատասխանաբար՝ 0. 0005-0. 005 մգ/լ, 0. 0001-0. 009 մգ/լ և 0. 0003-0. 046 մգ/լ և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Որպես կանոն, բնակավայրերում իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահնաջր: Շինարարական հոսքաջրերի հեռացման վայրը, ձևը, եղանակը կորոշվի կապալառուի կողմից՝ շինարարության արտադրության նախագծի (ՈՒՄՍ) սահմաններում:

Համաձայն ինժեներաերկրաբանական եզրակացության ստորգետնյա ջրերը նախատեսվող գործունեության տարածքում 25 մ խորության վրա բացակայում են:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

Բուսական և կենդանական աշխարհ

Ներկայացվող տարածքը վերընթաց լանդշաֆտային գոտիներից զբաղեցնում է չոր տափաստանային ցածր լեռնային (1000-1600 մ) գոտին, որին առանձին տեղամասերում (մանավանդ հարավահայաց և անջրդի) բնորոշ է Կիսաանապատային, իսկ հիմնականում՝ Տափաստանային բուսածածկի տիպը:

Բուսական աշխարհ: Նախագծի շրջանին բնորոշ են երկու տիպի բուսականածակեր: Զարգացած են լեռնատափաստանային հացազգային, տարածոտա-հացազգային լանդշաֆտները, և կիսաանապատային օշինդրա-էֆեմերային բուսականությունը:

Լեռնատափաստանային բուսականությունը ներկայացված է երեք ֆորմացիաներով՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստաններ:

Տարածաշրջանին լայնորեն տարածված են տրազականտները՝ *Astragalus microcephalus* - Գազ, *A. aureus* Ա.նսկեզոծ, *A. lagurus* - Գ.նապաստակի: Տափաստանային թփերից գերակշռում են՝ *Spiraea* - Ասպիրակի, *Spiraea*, *A. rupestre* – Սոխ ժայռի և *Acantholimon* – ոզնաթուփ - ի տեսակները: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ: Մարգագետնային տափաստանները ներկայացված են՝ *Festuca ovina*–Շյուղախոտ ոչխարի, *Koeleria cristata*–Կելերիա սանրանման, *Phleum phleoides*–Սիզախոտ սիզախոտանման տեսակներով և տարախոտային մարգատափաստանների ֆորմացիաներով: Տարախոտային մարգատափաստանների տեսակները հանդիպում են տարբեր թեքության և կողմնադրության լանջերին, և հանդես են գալիս առվույտի (*Medicago* L.) և երեքնուկի (*Trifolium* L.) ցեղի տեսակներով:

Տարածքին բնորոշ կիսաանապատային բուսականությունը ներկայացված է օշինդրա-էֆեմերային տեսակներով՝ օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), այծակն գլանաձև (*Aegilops cylindrica*), անապատասեզ (*Eremopyrum*), վառվուկ (*Alyssum*), փշամանդիկ (*Atraphaxis*), անմեռուկ (*Xeranthemum squarrosum*), երիզախոտ երկարամազը (*Taeniatherum crinitum*) և ավելաբույս գետնատարածը (*Kochia prostrata*):

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված բուսատեսակները ինչպես նաև ՀՀ

կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

Կենդանական աշխարհ: Տարածաշրջանում անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ մորեխների, ծղրիդների տեսակներ, երկթևանիներ: Կարիճներից հանդիպում է միայն դեղին կարիճը: Սողուններից դիտվել է բարեկազմ օձագլուղ մողեսը:

Կաթնասուններից արձանագրվել է նապաստակ և աղվեսը (*Vulpes vulpes*): Հայցվող տարածքում խոշոր կենդանիների վերգետնյա և ստորգետնյա բներ, որջեր չեն դիտարկվել, սակայն առկա են կրծողների բազմաթիվ բներ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում վայրի կենդանատեսակներ չեն կարող լինել:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքում ներկայացված կենդանատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ: ՀՀ Արագածոտնի մարզում գրանցված է միայն «Արագածի ալպյան» արգելավայրը, որը նշված տարածքից գտնվում է գտնվում է մոտավորապես 40 կմ հեռավորության վրա: Այն բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N 967-Ն (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=61505>) որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են ջրաերկրաբանական, ջրագրական, երկրաբանական և կենսաբանական հուշարձանները:

Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (29.05.2002թ. N 628) նաժանեվող գործունեության տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները:

Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (վկայականը բերված է հավելված 2-ում) կառուցապատվող տարածքը պատկանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Դպրոցի կառուցապատման տարածքը ներառված չէ հատուկ պահպանման ենթակա գոտիների ցանկում և չի հանդիսանում հատուկ կարգավորման օբյեկտ:

Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում:

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի 6777,8 քմ տարածքում կստեղծվեն կանաչապատ գոտիներ տարբեր ծառատեսակների և թփատեսակների համադրմամբ: Նախատեսվող գործունեության տարածքում գոյություն ունեցող ծառեր թփեր չկան: Նախատեսվում է տեղանքի՝ բնակլիմայական առանձնահատկությունների համապատասխանող ծառերի (43 հատ) տնկում, մասնավորապես,

- Տույա-10
- Եղնի-8
- Այլ տեսակներ՝ 25 :

Կանաչապատման համար կիրառվող բուսատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ գեղագիտական գործառույթները: Կանաչապատման և նախագծով ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են տվյալ տարածքի բնակլիմայական պայմաններին):

Հայտում ներկայացված է տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագիծը (տես՝ հավելված 6):

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

• Օդի աղտոտում

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով Հորատման (առանց պայթեցումների), բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2. 1

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0. 6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է

$$3 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 528 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=13 \text{ 240մ}^3$: $528 =25,07 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $25,07 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1,7 \text{ տ/մ}^3 = 42,6 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 2.1 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0,6 \times 42,6 \times 10^6 / 3600 = 0,59 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.59\text{գ/վ} \times 528 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ/10}^6 = 1,12 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲՄԿՊ, 3);

Շրջակա միջավայրի պահպանություն), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում լրացուցիչ կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

• Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲՄԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն/ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը դպրոցին հարակից տարածքում, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, բիզնեսի կետեր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 40-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի թրթռումների մակարդակների գործիքային և չափագրումներ.

• Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի

և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող համայնքային ջրագծից):

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Ջրցանի ծավալները հաշվարկված են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրն օգտագործվի միայն փոշենստեցման նպատակով:

- Տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրցանցին:

- ***Թափոնների և այլ նյութերի կառավարումը***

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա դպրոցի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը իրականացվի Աշտարակի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայրում (տես՝ հավելված 5):

- ***Աշխատանքի անվտանգություն և առողջություն***

Առողջության աշխատանքային անվտանգության միջոցառումները ևս կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲՄԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲՄԿՊ):

- ***Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները***

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը

- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

Շինարարական աշխատանքների ժամանակ`

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա` հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

• Նախատեսվող դպրոցական համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննություններ:

• իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78913>): Ըստ նախնական գնահատման,

ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՄԿՊ) համաձայն: ԲՄԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական ընթացքի աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Բնապահպանական և սոցիալական կառավարման (հավելված 7) և մոնիտորինգի պլաններն (հավելված 8) ընդգրկվելու են ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու են հիմնական կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲՄԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲՄԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով ընկերության կողմից կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում ընկերության բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր՝ մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում: Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներից են.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի փոշի, CO, NO) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:

- Աղմուկի թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ /Աղմուկն աշխատատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում սանիտարական նորմեր N2-III-11.3, ՀՀ Առողջապահության Նախարարության 2002 թ. մարտի 6-ի N 138 հրաման/:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության, Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ 12-Ն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 և 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 533-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

Ընկերության հանձնարարականով տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու ընկերության համապատասխան ստորաբաժանմանը նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի ավելի հաճախակի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայրի 3 փողոց 10 հասցեում գտնվող դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Հանդիպումը կայացել է 2024թ. դեկեմբերի 9-ին՝ ժամը 15:00-ին, Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցե՝ Նոր Եղեսիա 2-րդ փողոց, 5-րդ շենք), որին մասնակցել են համայնքապետարանի ներկայացուցիչներ, դպրոցի տնօրենը, ուսուցիչներ և համայնքի բնակիչներ, նախագծային և կառուցապատող ընկերության ներկայացուցիչներ (ընդամենը՝ 12 մասնակից): Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցանկը բերված են հավելված 12-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը եղել հասանելի հանրության համար «Առավոտ» օրաթերթի 2024թ. նոյեմբերի 8-ի համարում:

ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների արձանագրման մեխանիզմ (ԲԱՄ) հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

ԲԱՄ-ը մի գործընթաց է, որը հիմնականում ուղղված է արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից ծրագրի հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը: ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ներկայացված են ԲՄԿՊ-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023),
2. “World Bank Environmental and Social Framework.” World Bank, Washington, DC, 2016,
3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՀՇՆ II-7.01-2011, ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 26.09. 2011 թ., N 167-Ն Հ Ր Ա Մ Ա Ն,
4. Министерство промышленности строительных материалов СССР Главниипроект Научно-исследовательский и проектный институт по газоочистным сооружениям, технике безопасности и охране труда в промышленности строительных материалов НИПИОТстром ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов Новороссийск – 1985,
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ , 2 փետրվարի 2006 թվականի, N 160-Ն, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ-ՍԹԿ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
6. Տեղեկագիր: ՀՀ Շրջակա միջավայրի մասին 2019, <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-19.pdf>
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ, 19 մարտի 2015 թվականի N 596-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ, 12 ապրիլի 2018 թվականի N 426-Ն, ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՄ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ, 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2002 թվականի հունիսի 12-ին,
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 28.12.2020, N 102-Ն Հ Ր Ա Մ Ա Ն ՀՀՇՆ 20.04-«ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 24-Ն ՀՐԱՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ N 1243-Ն 30 նոյեմբերի 2015 թ. Հ Ր Ա Մ Ա Ն ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՌԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 31 մարտի 2021 թ., N 372-Ն Հ Ր Ա Մ Ա Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ՎՏԱՆԳԻ ՔԱՐՏԵԶԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶԸ ԵՎ ԸՍՏ ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1261-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

14. «Методическое пособие по расчету, нормированию и контролю выбросов загрязняющих веществ в атмосферный воздух». ОАО «НИИ Атмосфера». Санкт-Петербург, 2012,

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 22 մայիսի 2023 թ., N 04-Ն Հ Ր Ա Մ Ա Ն ՀՀՇՆ 30-01-2023 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 263-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԵՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՍՄԱՄԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ WGS-84 ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՂՐԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 4 հոկտեմբերի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արագածոտն, համայնք Աշտարակ գյուղ Նոր Եղեսիա 2-րդ փողոց 7 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նվիրաբերության պայմանագիր 16.09.2024թ 15316

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 02-080-0004-0070

Մակերեսի չափը (հա)՝ 1.252

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 04102024-02-0070, գաղտնաբառ՝ MWPDQEKYD7AA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

ՀՀ կառավարության 29.09.2024թ N 1369-Ա որոշմամբ գույքն ամրակցված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 04102024-02-0070, գաղտնաբառ՝ MWPDQEKYD7AA


Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2




Կադաստրի
կոմիտեի

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀԻՆ ԱՐԱՄԱՐԱԿԻ ԿԱՅՈՒՎԵՐՄԱՆ ԼԱՆՍԱԳԻՑ ՅՈՒՄԱՆ ԵՎ
ԱՏՈՐԳԵՏՆԱՅ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԱՆ ՓՈՒԼԻՍՍ Ս 1:500



ՏՊՐԱԿ	Ն. ԱՐՄԵՆՅԱՆ	ՀՀ ՄԻՆԻՍՏԵՐԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԱՆՈՒՄԻ ՎԵՐԿՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԳՆԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ	ՁԸ	ՇՆ. 8	20	
ՎՃԱՐԱԿ	Ն. ԱՐՄԵՆՅԱՆ		ՀՀ ՄԻՆԻՍՏԵՐԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԱՆՈՒՄԻ ՎԵՐԿՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԳՆԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿՐԹԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐԱԼ ԿՐԹԱՆՈՒՄԻ	ՁԸ	ՇՆ. 8	20
ՎՃԱՐԱԿ	Ն. ԱՐՄԵՆՅԱՆ					
ՎՃԱՐԱԿ	Ն. ԱՐՄԵՆՅԱՆ					

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



27 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թ.
ԹԻՎ 450

«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ
Ա. Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Յ Ա Ն Ի Ն

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան 23.01.2025թ. Ձեր թիվ Ե-008/25 գրության հայտնում եմ, որ Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայրի 2-րդ փողոցի 7-րդ հողամասում Ն. Շնորհալու անվան դպրոցի կառուցման համար նախատեսվում է շինարարական աղբի տեղափոխման վայրի հեռավորությունը՝ մինչև 3կմ, իսկ հետլիցքի համար բերվող գրունտի հեռավորությունը շինհրապարակից՝ մինչև 5կմ:

Հարգանքով՝



Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Կատարող՝
Ս. Մխիթարյան
քջջ. +37498252569

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲՍԿՊ)

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ			
	Գործունեություն / խնդիր	Կարգավիճակ	Գործարկված պահանջները
Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը	1. Շինության վերականգնում	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	2. Նոր շինարարություն	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	3. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Բ-ն ստորև
	4. Պատմական շենքեր և շրջաններ	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Գ-ն ստորև
	5. Հողի օտարում ¹	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Դ-ն ստորև
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր ²	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ե-ն ստորև
	7. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Զ-ն ստորև
	8. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև
	9. Սոցիալական ռիսկ	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Թ-ն ստորև

¹Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնական տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ունեցող) մարդկանց վրա:
²Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն ասբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն: ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն որոշում «Թափոնների գոյացման նորմատիվների եվ դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգ»>, ՀՀ օր Ե ն քը Թափոնների մասին՝ ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006 N430-Ն հ ռ ա մ ա ն «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին»:

ՄԱՍ Գ: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	<p>(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ</p> <p>(բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը)</p> <p>(գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները</p> <p>(դ) Կապալառուս պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊՍ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաճկոնակներ և կոշիկներ)</p> <p>(զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս</p>
Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(ա) Առաջին հարկից վերև ներսում քանդման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն աղբահան խողովակներ,</p> <p>(բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով</p> <p>(գ) Պննմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց</p> <p>(դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօթյա այրումը չի թույլատրվում</p> <p>(զ) Շինարարական հրապարակներում մեքենաները չպետք է պարապուրդի մատնվեն</p>
	Աղմուկ	<p>(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնեցման մեջ նշված ժամերով</p> <p>(բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու</p>
	Զրի որակ	<p>(ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան</p>

		<p>միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով</p> <p>(ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից</p> <p>(բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով,</p> <p>(գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից</p> <p>(դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը</p> <p>(ե) Հնարավորության դեպքում կապալառուն կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)</p>
<p>Բ. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(ա) Սանիտարական աղբի և շինարարական հրապարակներից (տեղադրում կամ վերակառուցում) եկող կեղտաջրերի մշակման մոտեցումները պետք է հաստատվեն տեղական իշխանությունների կողմից</p> <p>(բ) Նախքան ջրերի թափումը, կեղտաջրերի մշակման առանձին համակարգերից արտահոսող աղտոտիչները պետք է մշակվեն՝ աղտոտիչների որակի և կեղտաջրերի մշակման ազգային ուղեցույցերով սահմանված որակի նվազագույն չափանիշներից համապատասխանելու նպատակով</p> <p>(գ) Պետք է իրականացվի նոր կեղտաջրերի մշակման համակարգերի մոնիտորինգ (մինչև / հետո)</p> <p>(դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում</p>
<p>Գ. Պատմական շինություններ</p>	<p>Մշակութային ժառանգություն</p>	<p>(ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ծանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային օրենսդրության պահանջների համաձայն</p> <p>(բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>
<p>Դ. Հողի օտարում</p>	<p>Հողի օտարման պլան / շրջանակ</p>	<p>(ա) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամուտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սակայն կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի</p> <p>(բ) Հաստատված Հողի օտարման պլանը / շրջանակը (եթե այն պահանջվում է ծրագրի համար) պետք է իրականացվի</p>

